

գեր 109 միլ. որոնցից 63 միլիոն Գերմանացիք եւ Հոլանդացիք, 53 միլ. Քրիստոնացիք եւ 9 միլ. Սկանդինավիաներ:

Եւրոպայում հաշուում են 7,130,000 հրէաներ, որոնցից 4 միլ. Ռուսաստանում, 1 1/2 միլիոն Աւստրո-Հունգարիայում, 50,000 Փրանսիայում, 40,000 Իտալիայում, 130,000 Բալկանեան Թերակղզում եւ այլ պետութիւնների մէջ 43,000:

ԵՒՐՈՊԱՅԻ ԱԶԳՆԻՐ ԸՍՏ ԴԱՆԱՆՈՒԹԵԱՆՑ:

Հողմէական եկեղեցուն պատկանում են մօտաւորապէս 136 միլ. (37,5 %) Եւրոպայի ընդհանուր ազգաբնակչութեան). Արեւելեան եկեղեցուն 81 1/2 միլ. որոնցից յունական 80,567,000 (24,56 %), նոյն դաւանութեան պատկանող աղանդաւորներ 1,019,000 (0,31 %). Հայաստանեայց եկեղեցուն 124,000 (0,04 %). Բողոքականներ 79 միլ. (24 %), սոցանից աւետարանական դաւանութեան (Լութերականներ, Քեֆորմասներ եւ Ունիտաներ) պատկանում են 34 միլ. (10,4 %), Անգլիկան 19 միլ. (6,7 %), մէթոդիստներ 5,310,000 (17 %), Այլ բողոքականներ մօտաւորապէս 5 միլ. Ունիտաներ (սոցնեաններ) 120,000: Հրէաներ 6 միլ. (1,8 %) Մահմեդականներ 6,445,000. Կեթոններ մօտաւորապէս 430,000-ուրեմն ոչ քրիստոնեայ դաւանութիւնները Եւրոպայում 5.8 % են:

Հ. Ծ.



Ա Ձ Գ Ա Յ Ի Ն

ՎԵՆԱՓԱՌ ԷԼՅԵՐԱՊԵՏԻ ԸՆՈՐԷԼՊԱՐԳԵԻ ԱՅՅԵԼՈՒԹԻՒՆԵ ՒՐ ԷՕՏԻՆ.

Շատ է խօսուած և գրուած Հայաստանեայց եկեղեցու առաքելական աւանդութիւնների և հնաւանդ սկզբունքների մասին, սակայն քիչ անգամ է թուած այդ աւանդութիւններն ու սկզբունքները: Այսօր ամեն մի բանագէտ ինչպէս և ամեն մի համբալի հոգեւոր է մեր Ս. եկեղեցու քրիստոնէական շնորհառատ յատկութիւնները առանց որոշ և թանձրացեալ օրինակներով իւր ապաններն ապացուցանելու Այս տեղից էլ ծագում են այն անհամար թիւր կարծիքներն, որ մօքերի կիսակիրթ առաջնորդները բարդում են մեր Ս. եկեղեցու վերայ: Իայց հաւատի հաստատուն վիժի վերայ շինուած եկեղեցին անսայթաք յառաջադիմում է և կեանքի ամենայն մի կարևոր դիպուածում ցոյց է տալիս իւր աստուածապարզեւոյժը և հնաւանդ սկզբունքների հաւատարմութիւնը:

Աստուածային վարդապետը իւր աշակերտներին պատուէր տուաւ իւրեանց կեանքը

հար հօտի վերայ դնելու: Այս պատուէրին հպատակելով ս. առաքելալիներն ու նրանց յաջորդ եկեղեցու սուրբ հայրերը քարոզեցին կենդանի խօսքով և շատ անգամ էլ իրենց կեանքը գոհեցին:

Այս առաքելաւանդ սովորութիւնը պահեց Հայաստանեայց եկեղեցին իւր գոյութեան ամբողջ ընթացքում: Հայոց Հայրապետները երբէք չը նմանեցան այն եկեղեցական հովիւներին, որոնք անշարժ իրենց գահի վերայ բազմում են և երկրպագութեան են սպասում: Սրբազան Առաւորիչ Հայրապետից սկսած՝ մինչև մեր օրերը Հայոց Հայրապետներն ամենքն էլ չը գոհացան միայն հեռուից ուսուցանելով, թղթերով խօսելով և իրենց գահոյքի մերձաւորներին միտիթարելով նրանք գրեթէ ամենքն էլ շրջեցին ժողովրդի մէջ, ապրեցին իրենց հօտի հետ և մեռան նրա հետ և նրա մէջ:

Յիշենք արդեօք Մեծն Ներսիսին, որբերի, աղքատների, հիւանդների, նախարարների ու թագաւորների հօրը, տանք արդեօք Ս. Սահակի անունը, որ իւր ամբողջ կեանքում դադար չունեցաւ, որ պարտից բաժնից յունաց բաժինն էր թափառում: Տիրբոնից մինչև Կ. Պօլիս էր հասցնում իւր ձայնը: Ո՞վ է մոռացել ս. Յովսէփի կաթողիկոսին, որ երգուեց իւր հօտի հետ միասին մեռնելու և մեռաւ իսկ գերութեան մէջ:

Կ'երկարէր այս առաքելիւնների շարքը, եթէ մի առ մի թուէինք, ուստի թող բաւական լինին միայն մի քանի օրինակներ, թող ամեն ոք ինքն յիշէ Վահանի զինակից Մանգակունի կաթողիկոսին, միւս Յովհանն կաթողիկոսին, Ջորափորեցի Սահակ կաթողիկոսին և շն. և շն.:

Վերջին թշուառութեան դարերումն անգամ հայոց Հայրապետները չեն զլացել իրենց հօտին այցելելու և անձամբ միտիթարելու: Այն դիպուածներում, երբ հայոց Հայրապետները չեն նմանել որսորդներից հալածուած այժեամի, ինչպէս ասում է անըման Շնորհալին, նրանք միշտ իւրեանց

ժողովրդի մէջն են եղել իսկ երբ «քարան-
ձաներ ու այրերն ապաւինելու» են ստիպ-
ուել նրանք թղթերով են մխիթարել ժո-
ղովրդին:

Անձամբ իւր ժողովրդին մխիթարելու
պարտականութիւնից կարող չէր հրաժարուել
այն Հովիւն, որ արժանացել է «իւր ժողո-
վրդի Հայրն» անուան և որ իւր կեանքի մե-
ծագոյն մասն ժողովրդի վշտերին մասնակ-
ցելով է անցրել:

Այսօր Հայրիկը կատարում է մի պարտք,
որ Նրա վերայ գրել են իւր երանելի Նա-
խորդները, Հայոց Հայրապետն այսօր իբրև
մի Ներսէս պիտի խնամէ իւր հօտի թշուա-
ռացածներին, իբրև մի Սահակ Պարթև պի-
տի միաբանէ խստասիրտ և հակառակասէր
եղբայրներին, իբրև մի Սահակ Չորափորեցի
պիտի գործէ:

Մեծ են այս պարտիք, մեծ է և այն
հաւատը, որ առաջնորդում է Հայրիկին:

Վեհափառ Հայրապետն անցնելով բազ-
մաձայ վայրերից, այժմ այցելութեան է
դուրս եկել իւր ցրուած և վայրատեալ հօ-
տի հեռուօր խմբերին, որոնք հեռու Մայր-
Աթոռից, եղբայրակից և արիւնակից հասա-
րակութիւնից, իբրև փոքրիկ ուղղիսներ ըն-
դարձակ անապատի մէջ, դեռ ևս ծաղկում
են, թէպէտ և հեռ զհեռէ նեղացող սահ-
մաններով: Թէ բազմաձայ և թէ սակաւ-
ձայ կենդաններն ամենքն էլ ներքին ցաւեր
ունին, որոնց դարմանների մասին այժմ կա-
րող են խորհրդակցել, պահանջներ ունեն,
որոնց գոհացումը կարող են խնդրել:

Մայր-Աթոռից տեղով և սրտով հեռա-
ցածների համար մի կենդանի յուշարար է
պէտք, որ վառէ ամենքի սրտերում առկայ-
ծող կրակի բոցը:

Այդ բոցն արգէն վառուում է, դրա
փայլն է այն փառաւոր ընդունելութիւնների
նկարագիրն, որով լի են լրագիրները: Այս
փայլն աննսեմ է և հեռ զհեռէ զօրանում է,
դրան կարող չեն խանգարել ոչ քսուների
և ոչ փառամոլների խարդաւանանքներն, ոչ
էլ մեռած ապրածների դիակները:

Ժամ է արդ, որ հանդէս գայ հայ ժո-
ղովուրդը, ինքը խօսի և ինքը գործէ պա-
պանձեցնելով անձնընտիր պատգամաօրնե-
րին, ժողովրդի ինքնակոչ փաստաբաններին:
Վեհափառ Հայրապետը մի տարի Մայր-Ա-
թոռի վշտերն ուսումնասիրելուց յետոյ
առիթ կունենայ անձամբ ծանօթացնելու
ժողովրդին իւր Մօր հետ և նրա վերականգն-
ման համար հօտի աջակցութիւնը ձեռք բե-
րելու:

Այսպիսի պատմական վայրկեաններում
մեծ է իւրաքանչիւրիս պարտքը, որի կա-
տարումից է կախուած մեր ս. Եկեղեցու
ապագայ բարիքը:

Ժողովուրդը պէտք է բաց սրտով և ճա-
կատով իւր պահանջներն անէ, միանգամայն
և բաց ձեռքով օգնութիւն հասցնելու և
գործակցելու յօժարութիւն ցոյց տայ:

Ժողովրդից աւելի մեծ պարտք կայ հայ
եկեղեցականների վերայ, որոնք ամենուրեք
պէտք է աջակիցներ լինին իւրեանց Հօրը,
հօգևոր Պետին: Ոչ մի զօրավար յաղթու-
թիւն չէ տարել ցարգ առանց զինուորների,
Հայրապետի զինուորները եկեղեցականներն
են, թող նրանցից ամեն մէկը կատարէ թեր-
մեռանդութեամբ իւր պարտքը, որպէս զի
Հայրապետն ևս յաջողութեամբ աւարտէ իւր
մեծ առաքելութիւնը: Ամեն բանակ և իւր
դասալիքներն ունի, սակայն դասալիքների
վախճանը անխուսափելի մահն է:

Պատմութեան և ազգի առաջ յանցա-
ւոր և պատասխանատու կը մնան այն ան-
ձինք, որոնք փոխանակ աջակցութեան խո-
ջընդոտն կը լինեն և կամ իրենց անհաւա-
տարմութիւնով ու անպարտաճանաչութեամբ
արգելառիթներ կը յարուցանեն:

Ժողովուրդն այլ ևս կոյր չէ, նա գի-
տէ ճանաչել եկեղեցու հաւատարիմ զինուոր
եկեղեցականին և դասալիքներին:

«Արարատը խնդակցում է հայ ժո-
ղովրդին՝ Վեհափառ Հայրապետի շնորհա-
բաշխ այցելութեան առթիւ և արձանագրե-
լով այս պատմական փաստը՝ չէ մոռանում
յուշ ածել ամենքին իւրեանց պարտքը: